29.01.2026. N 14-Լ
Ինկորպորացիա առ 20.02.2026. N 32-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշման N 6 հավելվածի 8-րդ, 12-րդ կետերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հաստատել՝

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նպատակով տրամադրվող 2026 թվականի հունվար ամսվա համար վառելանյութը տրամադրվում է մինչև 2026 թվականի փետրվարի 10-ը՝ սույն հրամանով հաստատված կարգով համապատասխան ստորաբաժանումների պետերի կողմից մինչև 2026 թվականի փետրվարի 4-ը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին ներկայացված Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ցանկի հիման վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 1-ից:

4. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի

հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
29.01.2026թ. N 14- Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման (այսուհետ՝ այլընտրանքային փոխհատուցում) տրամադրման կարգը և այլընտրանքային փոխհատուցում ստացող Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ) շրջանակը:

2. Կոմիտեում այլընտրանքային փոխհատուցումն իրականացվում է վառելանյութ տրամադրելու տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1666-Ն որոշման N 6 հավելվածով նախատեսված դրույթների համաձայն:

3. Որպես այլընտրանքային փոխհատուցում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրվում է վառելանյութ (բենզին), բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի:

4. Այլընտրանքային փոխհատուցման նպատակով վառելանյութը յուրաքանչյուր ամսվա համար բաշխվում է հետևյալ չափաքանակներով.

1) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին՝ 40 լիտր.

2) Կոմիտեի ստորաբաժանումների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին՝ 30 լիտր:

5. Որպես այլընտրանքային փոխհատուցում վառելանյութ չի տրամադրվում.

1) Կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին.

2) Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումների պետերին և նրանց տեղակալներին (բացառությամբ Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումների պետերի տեղակալների (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչների)). (լրաց. 20.02.2026. N 32-Լ)

3) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում.

ա. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալներին,

բ. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վարչության պետերին և նրանց տեղակալներին,

գ. Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժինների պետերին.

4) Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում.

ա. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետին և նրա տեղակալներին,

բ. Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումների պետերին.

5) Կոմիտեի մարզային քննչական վարչություններում.

ա. Կոմիտեի մարզային քննչական վարչությունների պետերին և նրանց տեղակալներին,

բ. Կոմիտեի մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումների պետերին:

6. Վառելանյութը տրամադրվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ Կոմիտեի ստորաբաժանման պետի կողմից Կոմիտեի գլխավոր քարտուղարին հասցեագրված գրությամբ ներկայացվող ցանկի (Ձև N 2) հիման վրա, որում նշվում է վառելանյութ ստացող տվյալ ստորաբաժանման ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց տվյալները (անուն, ազգանուն, պաշտոն):

7. Վառելանյութ ստացող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց տվյալները Կոմիտեի գլխավոր քարտուղարին է ներկայացվում հաշվետու ժամանակաշրջանի ամսվա վերջին երկու աշխատանքային օրերի ընթացքում:

8. Վառելանյութը տրամադրվում է այն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ովքեր հաշվետու ամսվա ընթացքում ծառայության մեջ են գտնվել առնվազն 15 օրացուցային օր, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին և հերթապահության ժամանակ:

9. Վառելանյութը տրվում է Կոմիտեի նյութատեխնիկական ապահովման բաժնի կողմից տրամադրված կտրոններով տվյալ ստորաբաժանման կողմից ներկայացվող համապատասխան աշխատակցին (ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին կամ ծառայողին կամ տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողին) յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար մինչև հաջորդող ամսվա 20-ը:

10.Վառելանյութ տրամադրելու կտրոնները տրվում են հանձնման-ընդունման ակտով (Ձև N 1), որոնք պահվում են Կոմիտեի նյութատեխնիկական ապահովման բաժնում, իսկ պատճենը վառելանյութ ստացող կողմին:

11. Վառելանյութի կտրոնների բաշխումն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ կազմակերպում է տվյալ ստորաբաժանման պետը:

12. Վառելանյութը կարող է տրամադրվել նաև ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի հեռախոսում առկա բջջային հավելվածի միջոցով՝ Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից վառելանյութ մատակարարող ընկերությանը ամսական կտրվածքով ներկայացված ցանկի հիման վրա:

Ձև N 1

ԱԿՏ ԹԻՎ ___

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

հ/հ	Վառելանյութ ստացողի անունը, ազգանունը և պաշտոնը	Վառելանյութի կտրոնը տրամադրելու ամիսը, օրը և տարեթիվը
1.		
2.		
3.		
4.		
5.		

Հանձնող՝ _____ _____
(ստորագրություն) (պաշտոնը, անունը, ազգանունը)

Ընդունող՝ _____ _____
(ստորագրություն) (պաշտոնը, անունը, ազգանունը)

«___» ___ 20 թ.

Ձև N 2

ՑԱՆԿ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 20__ ԹՎԱԿԱՆԻ _____ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ ՍՏԱՑՈՂ

(ամիսը)

_____

(ստորաբաժանման անվանումը)

ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ

հ/հ	Անունը և ազգանունը	Պաշտոնը	Բջջային հեռախոսի համարը
1.			
2.			
3.			
4.			
5.			

Ստորաբաժանման պետ՝

_____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրություն)

«___» ___ 20 թ.